

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

30.03.2020թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Ա. Անանյանը, Գ. Գևորգյանը, Ա. Սաֆյանը,
Ն. Բաղդասարյանը, Լ. Պետրոսյանը
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ
Ա. Մարտիրոսյանը,
Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը,
Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր
մասնագետ Գ. Պետրոսյանը,
Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի առաջին կարգի
մասնագետ Հ. Կարապետյանը,
Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի առաջին կարգի
մասնագետ Ն. Բաբոյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

Լսեցին՝

1. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.
1.1. Հաղորդում՝ Սերբիայի Բելգրադ քաղաքում 2020 թվականի փետրվարի 10-ից
14-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) կողմից
կազմակերպած «Ձմեռային դպրոց. Մեթատվյալների վրա հիմնված տվյալների
ինտեգրման հայեցակարգ, վիճակագրական բիզնես ռեգիստր (SBR) և տվյալների
արտացոլում» թեմայով աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Ա. Մարտիրոսյան/

1.2. Հաղորդում՝ Վրաստանի Բաթումի քաղաքում 2020 թվականի փետրվարի 17-ից 21-ը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից կազմակերպված «Անշարժ բնակելի գույքի գների ինդեքսները» (ԱԲԳԳԻ) թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Մ. Երիցյան, Գ. Պեղրոսյան, Հ. Կարապետյան, Ն. Բաբոյան/

1.3. Հաղորդում՝ ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2020 թվականի մարտի 3-ից 6-ը ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 51-րդ նստաշրջան մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան /

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

09.04.2020թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԻՆ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԻՆ անդամներ՝ Ա. Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը,
Ն.Բաղդասարյանը
ՀՀ ՎՊԻՆ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էր՝

Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ.Մարկոսյանը:

Նիստում լսվեց հետևյալ հարցը.

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2018 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Համաշխարհային Բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնին՝ Համաշխարհային Բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2018 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան:

/Անհատական/

16.04.2020թ. նիստին

Մասնակցում էին՝

- ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Ա. Անանյանը, Գ. Գևորգյանը, Ա.Սաֆյանը,
Ն.Բաղդասարյանը
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էր՝

Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա.Հարությունյանը:

Նիստում լսվեց հետևյալ հարցը.

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 24-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

Որոշեցին՝

«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հունվարի 29-ի թիվ 03-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 24-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ի կետում հաստատված հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի.
2. Որոշման 2-րդ կետում հաստատված հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2-ի:

/Անհատական/